## ՎԱԽՃԱՆՎԵՑ ՀԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Ֆրանսիայում վախճանվեց գերշ. Տ. Հակոբ արքեպս. Վարդանյանը:

Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը, տեղեկանալով Սրբազան Հոր մահվան մասին, հունվարի 19-ին ցավակցական հեռագիր է հղել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հարավային Ֆրանսիայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Տարոն եպս. Մերեճյանին:

«Ձինքը անձամբ ճանչցած ըլլալով երկար տարիներե ի վեր՝ քաջատեղյակ ենք իր անքակտելի սիրույն հանդեպ Հայ Եկեղեցու և անոր հարազատ ավանդության: Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հավատավոր այն միաբաններեն էր, որոնք գիտցան դարերու ընթացքին ամուր և բարձր պահել Հայց. Եկեղեցու տեղն ու դիրքը, վարկն ու պատիվը Ս. Տեղյաց մեջ:

Իր կյանքին վերջին շրջանին ան նվիրվեցավ Հարավային Ֆրանսայի շրջանի հայության՝ որպես Հայրապետական պատվիրակի փոխանորդ, իր նպաստը բերելով Ֆրանսահայության ազգային-եկեղեցական կյանքին:

Արտանց կաղոթենք առ Ամենաբարին Աստված, որ իր հոգին ընդունի երկնային երանավետ խաղաղության մեջ և Ձեզի ու Հարավային Ֆրանսայի հայ հոգևորական դասուն պարգևե քաջառողջ կյանքի և բեղմնալից ծառայության բարիքները: Թող միշտ բարգավաճ ընթացքով զարգանա Հայ ազգային-եկեղեցական կյանքը Ձեր շրջանի մեջ», - ասվում է Վեհափառ Հայրապետի հեռագրում:

Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ, ի հիշատակ Սրբազան Հոր, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***

Գերշ. Տ. Հակոբ արքեպս. Վարդանյանը /ավազանի անունով՝ Ավետիս/ ծնվել է 1918 թ. հունվարի 1-ին, Ուրֆայում:

1920 թ. Ուրֆայի հերոսամարտից հետո ընտանիքը գաղթել է Հալեպ, ուր ինքը հաճախել է Հայկազյան ազգային վարժարան:

1932 թ. ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարան, որն ավարտելուց հետո, 1936 թ., ձեռնադրվել է սարկավագ, իսկ երեք տարի անց՝ կուսակրոն քահանա:

1965 թ., ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

Հոգևոր ծառայության տարիներին Սրբազան Հայրը եղել է Հայֆայի հայոց հոգևոր հովիվ (1941-1945 թթ.), Երուսաղեմի հայոց պատրիարքության «Սիոն» ամսագրի խմբագիր (1945-1951 թթ.), ժառանգավորաց վարժարանի տեսուչ (1960-1964 թթ.):

1964 թ. նշանակվել է Ս. Աթոռի նվիրակ Մարսելում, իսկ 1965 թ.՝ Հայրապետական պատվիրակի փոխանորդ:

1990 թվականից Սրբազան Հայրը հովվական և վարչական որևէ պաշտոն չէր զբաղեցնում: